

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՈՒԴ ՄԱՀՄՈՒԴԻ

ԻՐԱՆԻ «ԱԶԱՏ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԺԳ. 00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Կ. Հարությունյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ի.Կ.Կարապետյան մանկավարժական գիտությունների թեկնածու, դոց. Լ.Հ.Ղուկասյան
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հոկտեմբերի 16-ին ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի
մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է՝ 2015թ. սեպտեմբերի 16-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ՝



Ա.Փ.Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Երրորդ հազարամյակում մի կողմից՝ տեխնոլոգիաների արագ զարգացումը, կրթության զանգվածային հասանելիությունը, աշխարհագրական սահմանների նշանակության նվազումը, գլոբալացման բազմակողմ գործընթացները և մշտապես փոփոխվող պայմանները, մյուս կողմից՝ հասարակության լայն խավերի օրավուր ավելացող հետաքրքրությունը բարձրագույն կրթության նկատմամբ և բարձրագույն կրթության համակարգի աննախադեպ մեծացումը պատճառ են դարձել, որ բուհերը, ինչպես առևտրային ու արդյունաբերական հաստատությունները, ժամանակակից աշխարհի փոփոխություններին դիմակայելու համար մշտապես վերազինման ու արդիականացման կարիք ունենան:

Բարձրագույն կրթության համաշխարհայնացման երևույթը, տարբեր երկրներում համատեղ կենտրոնների և նոր գիտաճյուղերի հիմնադրումը, ուսանողների ու դասախոսների միջազգային փոխանակումները, օտարերկրյա ուսանողների ներգրավման համար մրցակցությունը և բարձրագույն կրթության նկատմամբ առևտրային մոտեցումը պահանջում են, որ բուհերը համաքայլ ընթանան միջավայրի փոփոխություններին՝ որդեգրելով ուսուցման նոր ձևեր ու մեթոդներ:

Բարձրագույն կրթությունն այն դեպքում կարող է գոյատևել ու առաջատար մնալ, եթե նրա ղեկավարները կարողանան գիտական արտադրանք ունենալ, բարձրացնել իրենց աշխատակազմի ինտելեկտի մակարդակը, խթանել աշխատակիցներին և բավարարել հաճախորդների (շահակիցների) պահանջները: Համալսարանի դասախոսներն ամեն օր պետք է բարձրացնեն իրենց ինտելեկտը և կիրառելով կրթական նոր ու բազմազան միջոցներ ու տեխնիկաներ՝ բարելավեն գիտելիքի փոխանցման և լսարանի կառավարման որակները: Ուսուցման նպատակահարմար և արդյունավետ մեթոդների կիրառումը կարող է լսարանում ստեղծել սովորելու ավելի լավ պայմաններ և ապահովել խորքային և կայուն ուսուցում:

Այս նպատակի իրագործման ուղիներից մեկը համալսարանն ուսուցանող կառույցի վերածելն է: Կառույց, որտեղ բոլորը սովորող ու սովորեցնող են և ուսուցում-ուսումնառություն աշխատանքներն ամեն օր իրագործվում են: Այսպիսի համալսարանում դասախոսները ոչ միայն սովորեցնող կողմն են, այլ նաև մշտապես սովորողի և ուսումնառուի դերում են գտնվում: Դասախոսները մշտապես պատրաստ են յուրացնել ուսումնակրթական նոր մեթոդները, իրագործել ուսումնական նոր ծրագրեր և հետազոտական-կիրառական նոր նախագծեր:

Համալսարանի գլխավոր պարտականությունը հասարակությունը ղեկավարող մասնագետ մարդու թի կրթումն է տարբեր ոլորտներում՝ տնտեսություն, առողջապահություն, կրթադաստիարակչություն, ազգային անվտանգություն և

պաշտպանություն, շրջակա միջավայրի պահպանություն, մինչդեռ Իրանի դասախոսների մեծ մասը հատուկ կրթություն կամ նախապատրաստում չի ստացել ուսուցման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառման հմտությունների գծով: Դասախոսները մեծ մասամբ լավագույնս տիրապետում են իրենց մասնագիտությանը և դասավանդվող առարկաներին, սակայն նրանց պաշտոնական ուսումնառության ծրագրերում ներառված չեն ուսուցման արդյունավետ մեթոդները, հետևաբար բավարար չափով ծանոթ չեն լսարանի կառավարման, դասի պլանավորման և ուսումնական գնահատման հարցերին:

Իրանի կրթության համակարգը վերջին տարիներին իր ոչ-արդյունավետ գործունեությունը բարեփոխելու, աշխատաշուկայի պահանջներին համաքայլ շարժվելու, կրթական նորագույն մեթոդներից ու տեխնոլոգիաներից օգտվելու ուղղությամբ ձեռնարկել է մի շարք փոփոխություններ, որոնք սակայն չեն կրում համակարգային բնույթ:

Ուսուցման հաջողությունն ու արդյունավետությունը պայմանավորված են մի շարք գործոններով ու բաղադրիչներով, դրանք են՝ ուսուցման ինտերակտիվ ու արդիական մեթոդների ճանաչումն ու կիրառումը դասախոսների կողմից, լսարանի կառավարման կարողությունն ու հմտությունը, ուսումնական նպատակների ու ակնկալիքների որոշարկումը, ուսանողների մոտ սովորելու դրդապատճառների խթանումը, ուսուցման կազմակերպումը փոքր ու մեծ խմբերով, լաբորատոր ու արհեստանոցային աշխատանքների կազմակերպումը, ուսումնական աղբյուրների ու ձեռնարկների կիրառումը, սովորողների գնահատումն ու ատեստավորումը, նպատակների ու ծրագրերի գնահատումը, հեռահաղորդակցական ու տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման ընթացքում և այլն:

Սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ քննում և ուսումնասիրում է Իրանի բարձրագույն կրթության համակարգի արդի պահանջներն ու ժամանակակից փոփոխությունները, վերլուծում ինտերակտիվ ու մասնակցային մեթոդների ներդրման հրատապությունն ու կարևորությունն ուսուցման գործընթացում:

Համալսարաններում արդյունավետ և էֆեկտիվ ուսուցման չափանիշների ու ցուցիչների կիրառման ուսումնասիրությունը մեծապես օգնում է կրթական համակարգի թերությունների ու բացթողումների հայտնաբերմանը, որով և պայմանավորված է սույն **հետազոտության կարևորությունն ու անհրաժեշտությունը**: Հետազոտությունը արդիական է, քանի որ, ուսումնասիրելով Իրանի բարձրագույն կրթության համակարգը, վեր է հանում դասախոսների կողմից ուսուցման տարբեր մեթոդների կիրառման չափն ու որակը, ուսանողների բավարարվածության աստիճանը կիրառվող ուսուցման մեթոդներից, դասախոսների գիտատեխնիկական պատրաստվածությունից, նրանց

անձնային հատկանիշներից, լսարանի կառավարման կարողությունից, նորագույն տեխնիկաների օգտագործման հմտությունից, ինչը և հիմք է տալիս գնահատել դասախոսների մանկավարժական գործունեությունը և բացահայտել թերություններն ու սխալները: Իրանի բուհերում արդյունավետ ուսուցման մեթոդների կիրառման չափը և դասախոսների մանկավարժական գործունեության գիտամեթոդական հիմքերի ուսումնասիրությունը համապարփակ պատկերացում կձևավորի բարձրագույն կրթության ընդհանուր վիճակի, ձեռքբերումների և թերությունների մասին, որի արդյունքում հնարավոր կլինի ձեռնարկել արդյունավետ միջոցներ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Իրանի բարձրագույն կրթության համակարգը և վեր հանել Իրանի «Ազատ» համալսարանի դասախոսների գործունեության գիտամեթոդական հիմքերը և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիներն ու միջոցները:

Հետազոտության խնդիրները

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1.Ուսումնասիրել Իրանի կրթադաստիարակչության զարգացման պատմական ընթացքը հին դարերից մինչև մեր օրերը, Իրանում նորագույն կրթության և բուհերի ձևավորման ուղին և քննել ԻԻՀ-ի հաստատումից հետո ձևավորված վիճակը բարձրագույն կրթության ոլորտում:

2.Լուսաբանել Իրանի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքը, քաղաքականությունը, ոլորտը կառավարող մարմինները և կառավարման առանձնահատկությունները և քննել ուսանողների ու դասախոսների վերաբերյալ վիճակագրական տվյալները:

3.Քննել «Ազատ» համալսարանի դասախոսների գործունեության արդյունավետության հիմքերը:

4.Վերլուծել դասախոսների կողմից կիրառվող ուսուցման արդյունավետ մեթոդները, դրանց թողած ազդեցությունը կրթության որակի և կառավարման մակարդակի բարձրացման վրա:

5.Կազմել դասախոսների գործունեության գիտամեթոդական հիմքերը գնահատող համապատասխան հարցաթերթիկ և կազմակերպել սոցիալաբանության ուսանողների շրջանում, ստացված տվյալները ենթարկել մշակման և գիտական վերլուծության:

Հետազոտության օբյեկտը Իրանի բարձրագույն կրթության համակարգն է և նրա կառավարման առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան Ազատ համալսարանի դասախոսների գործունեության արդյունավետության ուսումնասիրումն ու գնահատումն է դասի պլանավորման, կիրառվող ուսուցման մեթոդների, ուսուցման տեխնոլոգիաների

իմացության ու կիրառման, ուսանողների գիտելիքների գնահատման և լսարանի կառավարման չափանիշներով:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել կրթության կառավարման գիտական հիմնադրույթները և ուսուցման տեսությունները, այդ թվում Բ.Ջուլյսի և Դ.Ազոբելի մոտեցումները, Ա. Բենդուրայի սոցիալական ուսուցման տեսությունը, Լ.Վիգոտսկիի զարգացման տեսությունը, Ջ.Բրոնների ճանաչողական զարգացման տեսությունը, Է.Մեյոյի կառավարման մարդկային գործոնի, Ու. Քինգի և Գ. Սայմոնի կառավարման համակարգային մոտեցման տեսությունների հիմնադրույթները:

Հետազոտության վարկածը

Եթե դասախոսների գործունեությունը հիմնված լինի կրթության կառավարման սկզբունքների վրա, եթե նրանց կողմից կիրառվեն ուսուցման արդյունավետ մեթոդներ, տեխնոլոգիաներ և լսարանի կառավարման ճիշտ մեթոդաբանություն, ապա կբարելավվի ուսուցման արդյունավետությունը և կբարձրանա կրթության որակը:

Հետազոտության գիտական նորույթը

1. Հետազոտության մեջ Իրանի բարձրագույն կրթության հիմնահարցերը դիտարկվել ու քննվել են նոր մոտեցմամբ և արդիական դիտանկյունից, այսինքն ուսուցման ինտերակտիվ ու մասնակցային մեթոդների կիրառման նշանակության տեսանկյունից: Հետազոտությունը վեր է հանել փոխգործակցային ու ինտերակտիվ մեթոդների և կրթական տեխնոլոգիաների ներդրման դերն ու նշանակությունը Իրանի բարձրագույն կրթության որակի բարելավման գործում:

2. Բացահայտվել ու հիմնավորվել է «Ազատ» համալսարանի դասախոսների արդյունավետ գործունեության ազդեցությունը կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա:

3. Դասախոսների գործունեության արդյունավետությունը և դրա գիտամեթոդական հիմքերը դիտարկվել են համալիր կերպով՝ գնահատելով հետևյալ չափանիշների տեսանկյունից. Դասի պլանավորում ու կազմակերպում, լսարանի կառավարման հմտություն, գնահատման եղանակներ, ուսուցման մեթոդներ, կրթական տեխնոլոգիաների իմացության մակարդակ ու որակ:

4. Բացահայտվել են այս չափանիշների ու գործոնների կիրառման չափն ու մակարդակը Իրանի «Ազատ» համալսարանի դասախոսների գործունեությունում և ըստ այդմ որոշարկվել արդյունավետ ուսուցման ներկա բացթողումներն ու կարիքները Իրանի բուհերում:

5. Հետազոտությունում վեր են հանվել ու հիմնավորվել ուսուցման փոխգործակցային մեթոդների արդյունավետությունը և նպատակահարմարությունը

Իրանի «Ազատ» համալսարանում սովորող ուսանողների ուսումնական մոտիվացիաների և ուսումնական արդյունքների բարձրացման ուղղությամբ:

Ուշտպանության ներկայացվող դրույթներ

1. Ուսուցման արդյունավետության բարձրացման գործում դերակատար են տարբեր գործոններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի համալսարանի դասախոսների կողմից ուսուցման փոխգործակցային մեթոդների և լսարանի կառավարման մասնակցային ձևերի կիրառումը:

2. Ուսուցման նորագույն մեթոդների և կրթական արդիական տեխնոլոգիաների համադրումն ավանդական մեթոդներին նպաստում է ուսանողների հետաքրքրությունների և շարժառիթների ակտիվացմանը, գիտելիքների խորքային ու կայուն յուրացմանը, վերլուծական ու քննադատական մտքի ձևավորմանը և այդպիսով բարձրացնում կրթության որակը և արդյունքները:

3. Իրանի բուհերում դասախոսների կողմից կիրառվող ուսուցման մեթոդները վերափոխման և արդիականացման կարիք ունեն: Հասարակության կարիքները, ուսանողության ժամանակակից պահանջները բավարարելու և համաշխարհային միտումների հետ համաքայլ շարժվելու համար կա դասախոսների գործունեության գիտամեթոդական հիմքերը վերափոխելու անհրաժեշտություն:

4. Իրանի դասախոսները բավականաչափ ծանոթ չեն ուսուցման արդիական մեթոդներին ու տեխնոլոգիաներին, պետք է նրանց կրթության ու վերապատրաստման ծրագրերում ներառել այս մեթոդների կիրառման կարողությունների ու հմտությունների ձևավորումը, ինչը կբարձրացնի ուսանողների բավարարվածության մակարդակը և կխթանի դասախոս-ուսանող համատեղ փոխգործակցությունների ընդլայնումը և ուսուցման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության տարբեր փուլերում կիրառված **մեթոդներն** են.

Ա) Թեմային առնչվող գրականության ուսումնասիրությունը և անհրաժեշտ ինֆորմացիայի հավաքագրումը Բ) Տեսական աղբյուրների ուսումնասիրություն, նյութերի համեմատություն, վերլուծություն և համադրում Գ) Հարցազրույց դասախոսների հետ և նրանց տեսակետների հավաքագրում Դ) Սոցիալոգիաների կազմակերպում հարցաթերթիկի միջոցով Ե) Վիճակագրական-համակարգչային վերլուծություն (քանակը, տոկոսը, կուտակումները) ու նաև տվյալների երկրորդական մշակում T ստուդենտ թեստի, վարիացիայի վերլուծության և Պիրսոնի համահարաբերակցության թեստի միջոցով: Տվյալների նշանակալիության մակարդակի որոշման համար կիրառվել է ANOVA թեստը:

Հետազոտության քազան կազմում են 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակում Իրանի Նաջաֆաբադ քաղաքի Ազատ Համալսարանի տարբեր ֆակուլտետների

ուսանողները, որոնց ընդհանուր թիվը կազմում է 19740: Սոցիալարցմանը մասնակցել են այս ֆակուլտետների 78 լսարաններում սովորող 3085 ուսանող (2042-արական սեռից և 1043-ը իգական սեռից), որոնք և կազմում են սույն հետազոտության **ընտրանքը**:

Տվյալների հավաքագրման գործիքը մեր կողմից մշակված հարցաթերթիկն է , որը բաղկացած է 28 հարցից: Հարցաթերթիկը դասախոսների գործունեության արդյունավետությունը գնահատել է հինգ չափանիշներով և քննության է առել ուսանողների կարծիքը՝ դասախոսների կողմից հետևյալ հինգ գործոնների կիրառման մասին՝ **1.** Ուսուցման մեթոդներ **2.** Դասի պլանավորում **3.** Կրթական տեխնոլոգիաների կիրառումը լսարանում **4.** Գնահատման եղանակներ **5.** Լսարանի կառավարում:

Հետազոտության տեսական նշանակությունը

Հիմնախնդրի տեսական ուսումնասիրությունը և սոցիալարցումների արդյունքների վերլուծությունը վեր են հանում դասախոսների գործունեության բարելավման գիտամեթոդական հիմքերը: Հետազոտության արդյունքները հիմնավորում են դասախոսների կողմից լսարանում կիրառվող ուսուցման ինտերակտիվ մեթոդների և լսարանի կառավարման արդյունավետ ձևերի դերն ու նշանակությունը կրթության որակի բարձրացման և ուսանողների ուսումնական գործընթացի խթանման հարցում:

Հետազոտության գործնական նշանակությունը

Իրանն, ունենալով ուսանողական 3 միլիոնանոց հանրություն, կարիք ունի իր բուհերի և դասախոսների գործունեության մշտական հետազոտման և նոր ուսումնասիրությունների կազմակերպման: Այս հետազոտության արդյունքները կարող են օգնել դասախոսներին բարձրացնելու իրենց գործունեության արդյունավետությունը և ուսուցման գործընթացում կիրառել արդիական ու նպատակահարմար մեթոդներ: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել Իրանի բարձրագույն կրթության նախարարության, կրթության ոլորտի և բուհերի ղեկավարների կողմից ու նաև ներդրվել կրթության կառավարման դասընթացներում:

Հետազոտության կազմակերպման փուլերը

Առաջին փուլ (2007-2009 թթ.). Ուսումնասիրվել, քննվել ու վերլուծության են ենթարկվել թեմային առնչվող տեսական աղբյուրները, գիտական կառավարման տեսությունները և կրթության որակի բարելավման սկզբունքները:

Երկրորդ փուլ (2009-2011 թթ.). Հավաքված նյութերի և կատարված վերլուծությունների հիման վրա շարադրվել է առաջին գլուխը, որոշարկվել ուսումնասիրության հիմնադրույթները և մշակվել սոցիալարցման հարցաթերթիկը: Հրատարակվել է գիտական երկու հոդված:

Երրորդ փուլ (2011-2013 թթ.). Իրականացվել են սոցիալարցումներ լսարաններում, հավաքվել արդյունքները և համակարգչային ծրագրի միջոցով վիճակագրական

վերլուծության ենթարկվել, շարադրվել են ատենախոսության երկրորդ և չորրորդ գլուխները: Հրատարակվել է գիտական երրորդ հոդվածը:

Չորրորդ փուլ (2013-2014 թթ.). Շարադրվել է երրորդ գլուխը, հրատարակվել է գիտական չորրորդ հոդվածը:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, հրատարակված չորս գիտական հոդվածներում և հետազոտության բազա հանդիսացող բուհերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, առաջարկություններից, գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 174 էջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության մեջ** հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, ձևակերպված են նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը: Ներկայացված են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, աշխատանքի գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության բազան, ընտրանքը, տվյալների հավաքագրման գործիքը, աշխատանքի կազմակերպման փուլերը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը :

Առաջին գլուխը կրում է «**Իրանի բարձրագույն կրթության պատմության համառոտ ակնարկ**» վերնագիրը և ունի **երկու ենթագլուխ: Առաջին ենթագլխում** ուսումնասիրվել է կրթության զարգացման ուղին Իրանում հին դարերից մինչև Իսլամական հեղափոխության հաղթանակն Իրանում՝ սկսելով զրադաշտական քաղաքակրթությունից և Աքեմենյան թագավորությունից, հասնելով մինչև Իսլամական դարաշրջան և այնուհետև կանգ առնելով նոր տիպի կրթության ժամանակշրջանի և «Դար ալ-Ֆոնուն» բարձրագույն դպրոցի հիմնադրման իրադարձության վրա և այնուհետև առանձնացնելով Թեհրանի համալսարանի հիմնադրման շրջադարձային նշանակությունը: **Երկրորդ ենթագլուխը** հատկացված է Իրանի իսլամական հեղափոխությունից և ԻԻՀ-ի հաստատումից հետո բարձրագույն կրթության համակարգի փոփոխություններին և ձևավորված նոր կառուցվածքին:

Երկրորդ գլուխը վերնագրված է՝ «**Իրանի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը**», ունի **երեք ենթագլուխ: Առաջին ենթագլխում** քննվում են Իրանի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքը և մակարդակները, հիմնական կառույցները, պետական և ոչ պետական բուհերը, Ազատ համալսարանը: **Երկրորդ**

ենթագլխում ներկայացվում են Իրանի բարձրագույն կրթության ոլորտը կառավարող մարմիններն ու կառույցները, բարձրագույն կրթությունը տնօրինող նախարարություններն ու պատասխանատու կառույցները:

Երրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում Իրանի բարձրագույն կրթության զարգացմանն ու ընդլայնմանը, ներկայացվում են վիճակագրական տվյալներ բուհերից, ուսանողներից և պրոֆեսորադասախոսական կազմից ու նաև երկրի տարբեր նահանգներում ուսանողների քանակական բաշխվածությունից, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս Իրանի բարձրագույն կրթության ներկա վիճակից:

Երրորդ գլուխը՝ «Ուսուցման գործընթացի կազմակերպումը Իրանի «Ազատ» համալսարանում» վերնագրով, բաղկացած է յոթ ենթագլխից: **Առաջին ենթագլխում** վերլուծվում են արդյունավետ ուսուցման խնդիրները և մարտահրավերները «Ազատ» համալսարանում: **Երկրորդ ենթագլխում** քննվում են ուսուցման կազմակերպման բաղադրիչները և գործոնները: **Երրորդ ենթագլուխը** անդրադառնում է ուսուցման կազմակերպման գիտամեթոդական հիմքերին:

Չորրորդ ենթագլխում վերլուծվում են դասախոսների գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները Իրանի «Ազատ» համալսարանում, իսկ **հինգերորդ ենթագլխում** ուսումնասիրվում են դասախոսներին ներկայացվող ժամանակակից պահանջները այս համալսարանում:


Վեցերորդ ենթագլուխը հատկացված է դասախոս-ուսանող փոխհարաբերություններին «Ազատ» համալսարանում, իսկ **յոթերորդ ենթագլխում** քննվում են դասախոսի ինովացիոն տիպը և նորարարությունների ու ստեղծագործական մոտեցումների նշանակությունը ուսուցման գործընթացում:

Չորրորդ գլուխը վերնագրված է՝ **«Իրանի Ազատ համալսարանի դասախոսների գործունեության արդյունավետության վերաբերյալ կատարված սոցիալաբանության արդյունքների վերլուծություն»**, ունի երեք ենթագլուխ: **Առաջին ենթագլուխում** ներկայացված են սոցիալաբանական մեթոդաբանությունը, բազան, ընտրանքը, տվյալների հավաքագրման գործիքը և առաջադրված աշխատանքային վարկածները: **Երկրորդ ենթագլուխը** հատկացված է սոցիալաբանական տվյալներին և ստացված արդյունքներին, որտեղ նախ ներկայացվում են սոցիալաբանական մասնակիցների ժողովրդագրական տվյալներն ու առանձնահատկությունները, այնուհետև ուսանողների պատասխանները տրվում են համապատասխան աղյուսակներով և գծապատկերներով, որոնք ենթարկվում են գիտական վերլուծության ու մեկնաբանության, քննվում են տարբեր ֆակտորների միջև գրանցված արդյունքների տարբերությունները: **Երրորդ ենթագլխում** վիճակագրական փորձարկման մեթոդներով (T ստուդենտ, Անովա և Պիրսոնի համահարաբերակցության գործակից) գնահատվում են գրանցված

միավորները և ստուգվում սոցիալական վարկածները: Վերջում ամփոփվում են սոցիալական արդյունքները:

Ստորև ներկայացված են սոցիալական հարցերից մի քանիսը, հարցմանը մասնակցած ուսանողների պատասխանների պատկերը և դրանց վերլուծությունը:

Չարք 1. Ձեր դասախոսը հիմնականում ուսուցման ո՞ր մեթոդն է կիրառում:




Գծապատկեր 1. Դասախոսների կողմից ուսուցման մեթոդների կիրառման վերաբերյալ ուսանողների պատասխանների բաշխվածությունը

Վերոբերյալ տվյալները վկայում են, որ դասախոսություն կարգալու մեթոդը մեծ տարածում ունի Իրանի համալսարաններում, և լսարանների մեկ երրորդում կիրառվում է հիմնականում դասախոսության մեթոդը: Այս փաստը խոսում է այն մասին, որ դասախոսները մեծ մասամբ ծանոթ չեն ուսուցման նորագույն ինտերակտիվ մեթոդներին: Բարձրագույն կրթության ոլորտում շեշտը դրվում է ոչ թե ստեղծագործական և վերլուծական մտքի ձևավորմանը, այլ գիտելիքների սերտման վրա:

Իրանի բարձրագույն կրթության համակարգը հետազոտական առանցքի փոխարեն, ուսանողներին կենտրոնացնում է միայն լսարանում դասախոսության միջոցով տրվող բովանդակության վրա: Դասախոսները լսարաններում մեծ մասամբ կիրառում են դասախոսություն կարգալու մեթոդը և խուսափում առավել ակտիվ ու բանավեճային ձևերի կիրառումից: Այս փաստը խոսում է դասախոսների կողմից այլ

մեթոդներին ծանոթ չլինելու, լսարանի կառավարման և բանավեճ վարելու հմտություններին չտիրապետելու մասին: Խմբային ու բանավիճային մեթոդները դասախոսներից պահանջում են գիտական բարձր մակարդակ և մասնագիտական բավականաչափ պատրաստվածություն, որպեսզի դասախոսը կարողանա պատասխանել ուսանողների առաջադրած հարցերին ու կարծիքներին և նրանց հետ արդյունավետ երկխոսություն ծավալել, այդ իսկ պատճառով շատ դասախոսներ գերադասում են խուսափել մարտահրավերներից ու նման մթնոլորտից:


Հարց 2. Ձեր դասախոսն ի՞նչ չափով է կիրառում խմբային (թիմային) աշխատանքի մեթոդները լսարանում:



Գծապատկեր 2. Դասախոսների կողմից լսարանում խմբային աշխատանքների կիրառման չափն ու մակարդակը՝ ուսանողների գնահատմամբ

Ինչպես մատնանշում են վերոբերյալ գծապատկերի տվյալները՝ 3085 ուսանողներից 2445-ը անբավարար ու ցածր են գնահատել խմբային աշխատանքի մեթոդի կիրառման չափն ու մակարդակը, մինչդեռ այս մեթոդը ուսուցման արդյունավետ ու գործունյա մեթոդներից մեկն է: Խմբային ու համագործակցական մեթոդների նվազ կիրառումը մարում է ուսանողների հետաքրքրասիրությունը, կենսունակությունը, ինքնուրույն գործելու հնարավորությունը՝ լսարանում ստեղծելով պասիվ միջավայր:

Հարց 3. Դասախոսները լսարանում բավարար չափով կիրառո՞ւմ են կրթական տեխնոլոգիաներ:



Գծապատկեր 3. Դասախոսների կողմից լսարանում կրթական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ ուսանողների պատասխանների բաշխվածությունը:

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ գծապատկերի տվյալները՝ ուսանողների մեծամասնությունը (1807 ուսանող) անբավարար է գնահատել կրթական տեխնոլոգիաների կիրառման չափն ու մակարդակը, 726-ը մասամբ է գոհունակություն հայտնել կրթական տեխնոլոգիաների կիրառման վիճակից: Հարցվող ուսանողներից 547-ը բավարար է գնահատել այս գործոնի կիրառումը:


Աղյուսակ 1

Կրթական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն

Կատեգորիա	Ուսանողների պատասխանների միջին բալ	Ակնկալվող միջին բալ	T-ի թիվը	Ազատութ. աստիճան	Տարբերության նշանակալիության գործակից
Կրթական տեխնոլոգիաներ	4.87	6	-34.77	3079	.000

Վերոբերյալ աղյուսակի տվյալների համաձայն՝ պատասխանների 4.87 միջինով, ազատության 3079 աստիճանի և 95 տոկոս վստահելիության պայմաններում դիտարկված T-ն ավելի փոքր է, քան ստանդարտ թիվը: Ուրեմն ուսանողների կարծիքով՝ դասախոսները բավարար չափով չեն կիրառում կրթական տոխնոլոգիաները: Ուսանողների առավելագույն ակնկալվող գնահատականը կազմել է 9 բալ, իսկ նվազագույնը՝ 3: Նկատի առնելով արձանագրված միջին գնահատականը, այսինքն 4.87 բալը, որն ավելի ցածր է ակնկալվող բալից, կարելի է եզրակացնել, որ վստահության 95 տոկոս մակարդակով, ուսանողների դժգոհությունը վիճակագրական առումով նշանակալի է: Ուսանողների մեծ մասը դժգոհություն է հայտնել, հատկապես, դասախոսների կողմից համակարգչային ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և էլեկտրոնային ու համացանցային ուսուցման նվազ կիրառման վերաբերյալ: Սա ևս փաստում է բուհերում այդ ոլորտների ներդրման ու զարգացման անհրաժեշտությունը:

Հարց 4. Դասախոսները կիրառում են լսարանի արդյունավետ կառավարմանը ներկայացվող չափանիշները:



Գծապատկեր 4. Դասախոսների կողմից լսարանի արդյունավետ կառավարմանը ներկայացվող չափանիշների կիրառման վերաբերյալ ուսանողների պատասխանների բաշխվածությունը:

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ գծապատկերի տվյալները՝ հարցվող ուսանողներից 1775-ը բացասական են պատասխանել դասախոսների կողմից լսարանի արդյունավետ կառավարման չափանիշների կիրառման հարցադրմանը՝ այն գնահատելով անբավարար մակարդակի վրա: Հարցվողներից 220-ը մասամբ է գոհունակություն հայտնել, իսկ 370 ուսանող ևս դրական կարծիք է հայտնել: Լսարանի արդյունավետ կառավարումը դասախոսի գործունեության կարևոր բաղադրիչներից է և մեծ դեր ունի ուսուցման արդյունքների ու որակի բարձրացման գործում:

Աղյուսակ 2

Լսարանի արդյունավետ կառավարման չափանիշների վերաբերյալ ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն

Կատեգորիա	Ուսանողների պատասխանների միջին բալ	Ակնկալվող միջին բալ	T-ի թիվը	Ազատութ. աստիճան	Տարբերության նշանակալիության գործակից
Լսարանի կառավարում	11.28	12	28.99	3064	.000

Վերոբերյալ աղյուսակի համաձայն՝ պատասխանների 11.28 միջինով, ազատության 3064 աստիճանի և 95 տոկոս վստահելիության մակարդակում ստացված T-ն ավելի փոքր է, քան ստանդարդ թիվը: Ուրեմն ուսանողների կարծիքով՝ դասախոսները բավարար չափով չեն կիրառում լսարանի արդյունավետ կառավարման չափանիշները: Դասախոսների այս թերությունը լրացնելու նպատակով անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացներում հատուկ ուշադրության արժանացնել այս հմտության ուսուցմանն ու կատարելագործմանը և բարձրացնել դասախոսների կառավարչական հմտությունները: Լսարանի արդյունավետ ու ճկուն կառավարումը առավել անհրաժեշտ ու կարևոր է, հատկապես, արդի ժամանակներում և նոր սերնդի պահանջներին ու նոր փոփոխություններին համապատասխան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության թեմայի հանգամանակից ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1.Վերջին տասնամյակներում Իրանի բարձրագույն կրթությունն աննախադեպ ընդլայնվել է՝ քանակական զարգացում ապրելով և ներգրավելով մեծ թվով ուսանողներ, սակայն այս գործընթացը տեղի է ունեցել անհամաչափ, ոչ գիտական, երկրի պահանջներին անհամապատասխան ձևով՝ չպահպանելով տարբեր մարզերի և աշխարհագրական շրջանների միջև զարգացման հավասարակշռությունը և բավարար ուշադրություն չդարձնելով որակական զարգացմանը, ոլորտի արդիականացմանը և նորագույն մեթոդների ու միջոցների ներդրմանը:

2.Իրանի բարձրագույն կրթության համակարգը մասնագետ ուժերի և դասախոսական կազմի ներգրավման հարթության վրա ունի լուրջ բացթողումներ և չի կարողանում արդյունավետ հանդես գալ: Գիտական ներուժի և դասախոսական կազմի ընտրությունը և ներգրավումը կատարվում են աննպատակահարմար, ոչ արդյունավետ և ոչ գիտական ու ոչ ժողովրդավարական սկզբունքներով, իսկ բարձր որակավորում ու մասնագիտություն ունեցող անձանց և դասախոսներին համակարգը չի կարողանում շահագրգռել ու պահպանել: Համալսարանների դասախոսները չունեն աշխատանքային առաջխաղացման, գիտական առաջընթացի և վարչական հովանավորման հավասար պայմաններ ու հնարավորություններ:

3.Մեր օրերում մարդկային ներուժը համալսարանների զարգացման ամենագլխավոր կապիտալն է: Կրթական ու հետազոտական բարձր տեխնոլոգիաները, նպատակահարմար միջավայրը, լաբորատոր արդիական սարքավորումները և ֆինանսական աղբյուրները թեև բուհերի հաջողության անհրաժեշտ ու առաջնային պայմաններն են համարվում, սակայն դրանք ինքնին չեն կարող երաշխավորել բարձրագույն կրթության որակը: Բարձր վարկանիշ ունի այն համալսարանը, որը համալրված է ուսուցման գործում մասնագիտացված ու հմուտ դասախոսներով, ովքեր ծանոթ են ուսուցման արդիական և ինտերակտիվ մեթոդներին, լսարանի կառավարման փոխգործակցային եղանակներին, ուսանողների մոտիվացիաների և ուսումնական առաջադիմության գնահատման արդիական ձևերին:

4.Լսարանում ուսուցման-ուսումնառության և գիտելիքների վերարտադրման ու ստեղծագործության նպաստավոր միջավայր ձևավորելու համար անհրաժեշտ է և՛ ուսանողի, և՛ դասախոսի երկկողմանի ներդրումը, փոխգործակցությունը, համատեղ ջանքերն ու միասնական կամքը, այդ իսկ պատճառով դասախոսները պետք է ընտրեն լսարանի կառավարման մասնկցային ու թիմային աշխատանքը, այսինքն ուսուցման պրոցեսը կազմակերպեն ուսանողներին առավել ներգրավելու և փոխգործակցային

սկզբունքներով, թիմային աշխատանքով, բանավիճային ու վերլուծական մոտեցմամբ, քաջալերելով անհատական լուծումներն ու ստեղծագործական միտքը:

5.Նկատի առնելով արդյունավետ ուսուցման մեծ նշանակությունը գիտելիքների խորքային փոխանցման, կայուն յուրացման և վերլուծական մտքի ձևավորման գործում, Իրանի բուհերում մեծ անհրաժեշտություն է առավելագույնս օգտվել ուսուցման ինտերակտիվ մեթոդներից և այն համադրել ավանդական մեթոդների հետ, խթանել ուսանողների սովորելու դրդապատճառները, նպաստել քննադատական մտածողության և վերլուծական կարողությունների ձևավորմանը, դրական լիցքեր հաղորդել լսարանին ու ստեղծել սովորելու միջավայր, ճկունությամբ օգտվել ուսումնական և դասավանդման համադրական միջոցներից ու տեխնոլոգիաներից:

6.Անհրաժեշտ է համալսարանի գիտական կադրերի պատրաստման ու նաև վերապատրաստման դասընթացներում ներառել կրթության կառավարման գիտական հիմնադրույթները, ուսուցման նորագույն մեթոդների օգտագործման կարողությունների ու հմտությունների ձևավորումը:

7.Երրորդ հազարամյակը տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և գիտելիքահենք դարաշրջան է, որի հրամայականներն ու պահանջները տարբերվում են արդյունաբերական ժամանակաշրջանից: Արդյունավետ ուսուցման գիտամեթոդական հիմքերը մեծ դեր ունեն արդի ժամանակների պահանջներին համաքայլ ընթանալու գործում: Տեղեկատվական տեխնոլոգիաները և հեռահաղորդակցական հնարավորություններն այսօր լայնորեն ներդրվում են բոլոր երկրների բարձրագույն կրթության համակարգերում, և տեղի են ունենում համաշխարհայնացման լայնածավալ գործընթացներ, որոնք վերախմաստավորում են դասախոսի և ուսանողի գործունեության և ուսուցման գործընթացի կազմակերպման բնույթը և ձևերը: Ժամանակի պահանջներին համաքայլ շարժվելու համար Իրանի բարձրագույն կրթության համակարգում կա դասախոսների մանկավարժական գործունեության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցական միջոցների նպատակային ու արդյունարար կիրառման անհրաժեշտություն:

8.Իրանի Ազատ համալսարանի դասախոսների գործունեության առավել հաջող կողմերն ու բարձր արդյունքները վերաբերում են դասավանդվող առարկայի իմացությանը, անձնային հատկանիշներին ու մարդկային փոխհարաբերություններին, ուսանողների ուսումնական առաջադիմության գնահատման արդարացիությանը, իսկ առավել թույլ և անբավարար կողմերն են՝ լսարանում կրթական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակը, ակտիվացնող մեթոդների պակասը, գործնական աշխատանքների բացը, լսարանի կառավարման չափանիշների նվազ կիրառումը, դասի պլանավորման ու ծրագրման բացթողումը, ուսումնական գնահատման համար նպատակահարմար հարցերի մշակման կարողությունը, օտար լեզուների վատ

իմացությունը, համակարգչային և հեռահաղորդակցական հմտությունների անբավարարությունը:

9. Ժամանակակից հասարակության կրթությունը պահանջում է գիտելիքի կողքին կարևորել նաև կարողությունները, հմտությունները և հետազոտությունների իրականացումը: Ուսումնական ծրագրերը և դասախոսների գործունեությունը պետք է մշակվեն այս առանցքների շուրջ և ընդլայնվեն ուսումնասիրություններն ու հետազոտությունները: Դասախոսների գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն լսարանային աշխատանքով: Պետք է նրանց ընձեռվի հետազոտության, փորձարկումների, ուսումնասիրությունների և զարգացման հնարավորություն, որպեսզի նրանք ևս կարողանան ուսանողների հետ միասին իրականացնել համատեղ աշխատանքներ ու ծրագրեր: Այդ հետազոտությունները պետք է լինեն նպատակային և ուսանողների մոտ զարգացնեն պրպտող ու հետաքրքրասեր ոգի՝ բացահայտելով կատարվող հետազոտության կապը տվյալ գիտաճյուղի կամ առարկայի նպատակների և զարգացման հետ:

10. Իրանի Ազատ համալսարանի դասախոսների կրթության և վերապատրաստման ծրագրերը լուրջ վերանայման և արդիականացման կարիք են զգում: Դասախոսներին չի տրվում բավարար գիտելիքներ կրթության նորագույն տեխնոլոգիաների ճանաչման, արդյունավետ ուսուցման մեթոդների կիրառման և մարդկային փոխհարաբերությունների սկզբունքների վերաբերյալ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մահմուդի Մ., Իրանի Իսլամական հանրապետության բարձրագույն կրթության համակարգը, Մանկավարժական միտք, 1-2/2009, Երևան, էջ՝ 186-194:

2. Մահմուդի Մ., Իրանի բարձրագույն կրթության պատմությունը, Մանկավարժական միտք, 3-4/2009, Երևան, էջ՝ 199-208:

3. Մահմուդի Մ., Իրանի Ազատ համալսարանի դասախոսների կողմից ուսուցման տարբեր մեթոդների և չափանիշների կիրառման վերաբերյալ կատարված սոցիալոգիաների արդյունքների վերլուծություն, Մխիթար Գոշ գիտամեթոդական հանդես, 3[27]2010, Երևան էջ 174-176:

4. Մահմուդի Մ., Բուհերի դասախոսների ուսուցման արդյունավետ մեթոդները և անհրաժեշտ բաղադրիչները երրորդ հազարամյակում, Մանկավարժական միտք, 3-4/2013, Երևան, էջ 303-305:

МАСУД МАХМУДИ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЕ ОСНОВЫ
ЭФФЕКТИВНОСТИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕПОДАВАТЕЛЕЙ “АЗАД”
УНИВЕРСИТЕТА ИРАНА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 «Теория и история педагогики».

Защита состоится 16 октября 2015 г. в 14⁰⁰, на заседании действующего в ЕГУ 065 профессионального педагогического совета по ВКК. Адрес: 0025, 52 А, улица Абовяна, Ереван, корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория 203.

РЕЗЮМЕ

Актуальность темы:

Имея целью улучшить свою неэффективную деятельность, пользоваться новейшими образовательными методами и технологиями, шагать в ногу с требованиями рынка, образовательная система Ирана за последние годы предприняла ряд изменений, которые, однако, не носят систематического характера. Актуальность данного исследования состоит в том, что она исследует современные требования и изменения высшей образовательной системы Ирана, анализирует важность внедрения интерактивных методов.

Цель исследования:

Целью исследования является изучение высшей образовательной системы Ирана, выявление научно-методических основ деятельности преподавателей “Азад” университета Ирана, а также направлений и способов повышения эффективности обучения:

Задачи исследования:

1. Изучить исторический процесс образовательно-воспитательного развития Ирана с давних веков до наших дней, пути формирования новейшего обучения и ВУЗ-ов Ирана, а также проанализировать оформившееся состояние в сфере высшего образования после утверждения ИИР.

2. Выявить структуру и политику высшей образовательной системы Ирана, органы, управляющие сферой и особенности управления, а также изучить статистические данные, касающиеся студентов и преподавателей.

3. Изучить основы эффективности деятельности преподавателей “Азад” университета.

4. Проанализировать результативные методы обучения, применяемые преподавателями, их влияние на качество образования и повышение уровня управления.

5. Составить соответствующий вопросник, оценивающий научно-методические основы деятельности преподавателей и организовать соц. опросы среди студентов, полученные данные разработать и проанализировать научным методом.

Научная новизна исследования:

1. В данном исследовании изучить основные вопросы высшего образования Ирана, применяя новый подход и актуальную точку зрения, т. е. значения применения интерактивных методов обучения. Исследование выявило роль и значение внедрения интерактивных методов и образовательных технологий, в деле улучшения качества высшего образования Ирана.

2. Было обосновано эффективное влияние деятельности преподавателей “Азад” университета на качество образования и повышение результативности обучения.

3. Эффективность деятельности преподавателей и ее научно-методические основы были комплексно изучены и оценены, с точки зрения следующих показателей: планирования и организации уроков, навыков управления аудиторией, способов оценивания, уровня и качества знаний методов обучения и образовательных технологий.

4. Были выявлены размеры и уровень применения этих показателей и факторов в деятельности преподавателей “Азад” университета, следовательно, были определены нынешние недостатки результативного обучения в ВУЗ-ах Ирана.

5. В исследовании были выявлены и обоснованы эффективность и целенаправленность взаимовыгодных методов обучения в направлении повышения результатов обучения и образовательных мотиваций студентов, учащихся в “Азад” университете Ирана.

Теоретическая значимость исследования.

Исследование выявляет научно-методические основы улучшения деятельности преподавателей, а также роль и значение эффективных способов управления аудиторией и интерактивных методов обучения, применяемых преподавателями во время уроков. Результаты исследования могут способствовать повышению эффективности деятельности преподавателей и применению новейших и целенаправленных методов в процессе обучения.

Практическая значимость исследования.

Результаты исследования могут быть использованы Министерством образования, в сфере просвещения и ВУЗ-ов, а также могут быть применены во время уроков.

Структура и объем диссертации.

Диссертация состоит из введения, 4 глав, заключения, списка используемой литературы, приложения. Объем диссертации составляет 174 компьютерных страниц.

MASOUD MAHMOUDI
SCIENTIFICAL-METHODICAL BASES OF THE EFFECIENCY OF ACTIVITY OF
LECTURES OF IRAN “AZAD” UNIVERSITY

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01 -“Theory and history of pedagogics”.

The defense of the thesis will be hold at 14⁰⁰, on October16, 2015, in the Yerevan State University (address: 0025, Abovyan str. 52^a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N. 203).

SUMMARY

The relevance of the research

In recent years Iran educational system began to improve its inefficient work, keep pace with market requirements, and use the latest educational methods and technologies, which, however, do not have systematic character. The relevance of this study is that it explores the modern requirements and changes in the higher education system of Iran, analyzes the importance of introducing of interactive methods.

The aim of the research:

The aim of this study is to investigate the higher education system of Iran, and identify scientific and methodological foundations of the lecturers` activity in “Azad” University of Iran, as well as directions and ways to improve the effectiveness of the training:

The objectives of the research:

1. To study the historical process of education and educational development of Iran from ancient ages up to present days, the path of formation of modern learning and institutes of higher education of Iran as well as to analyze already formed state after the approval of IIR in the field of higher education.
2. Identify the structure and policies of the higher education system of Iran, the bodies that govern the scope and management features, and analyze the statistical data, concerning students and lecturers.
3. To study bases of effectivity of “Azad” University lecturers` activity.
4. To analyze the productive teaching methods used by lecturers, their impact on the quality of education and improving of governance degree.
5. To create a questionnaire that assesses the scientific and methodical bases of lecturers activity and to organize social services among students, and develop and analyze obtained data by scientific methods.

Scientific novelty of the research:

1. In this study, major issues of higher education of Iran have been observed and examined with new approach and current point of view, that is, by using interactive teaching methods. The study revealed the role and importance of the introduction of interactive methods and educational technologies to improve the quality of higher education in Iran.

2. It has been revealed and founded influence of reasonably effective activity of lecturers of “Azad” University on education quality and improving learning outcomes.

3. The effectiveness of lecturers` activity and its scientific and methodical bases were been comprehensively studied and assessed in terms of the following indicators: planning and organizing of lessons, audience management skills, methods of assessment, the level and quality of knowledge of teaching methods and educational technologies.

4. It were identified the size and the level of use of these indicators and the factors in the activities of the lecturers of “Azad” University, therefore, have been identified current shortcomings in the effectiveness of the training institutes of higher education in Iran.

5. The study identified and substantiated the effectiveness and purpose of mutually beneficial training methods towards improving learning outcomes and educational motivation of students of “Azad” University of Iran.

Theoretical value of the research:

The study reveals the scientific and methodical bases of improving the performance of and lecturers the role and importance of effective ways to control the audience and the interactive teaching methods used by lecturers during lessons. The findings may help improve the effectiveness of lecturers and application of new methods and focused in training.

The practical value of the research:

The results can be used by the Ministry of Education, in the field of Education and Higher Education Institutions, and also can be used during lessons.

Structure and volume of the work

The thesis consists of an introduction, four chapters, conclusions, list of used literature, applications. Volume of dissertation is 174 computer pages.

